Ավետիք Իսահակյան

Ամպի փեշով մեկ հավք անցավ

Ամպի փեշով մեկ հավք անցավ,
Անուշ կանչեց իմ յարին.-
Անուշ ձենով սիրտըս լըցվավ.
Յարըս անցավ, կուժն ուսին:

Էս աղբուրը գըլգըլալով
Քարփեն ծո՛ւփ - ծո՛ւփ կըփըռվի
Ծով – ծամերըդ ալի՛ք - ալի՛ք
Մարմար կըրծքիդ կըփըռվի:

Ա՜խ, նազիկ ջան, եղնիկ – աղջիկ,
Նարին կուրծքըդ թող պագեմ.
Սերըս բոց է, սիրտըս խոց է,
Վառ – պաչերըդ դարման են;

Չէ ո՛ր, յա՛ր ջան, դավրըդ կերթա,
Կուրծքըդ նըշխուն, շարմըղուն
Հող ու մոխիր պիտի դառնա,
Ջուր ինչո՞ւ ես խընայում…

1897
Մարմաշենի վանք